Պալատական խնջույքների ընդհանուր նկարագիրը Բագրատունյաց Հայաստանում

Գրիգորյան Մարիամ Գ.
պ. գ. թ., Պատմության ինստիտուտ ՀՀ ԳԱԱ (Երևան, ՀՀ)
https://orcid.org/009-007-1644-4326
manangrigoryan86@mail.ru

ՀՏԴ՝ 394.1:94(479.25); **EDN:** IOMFZE
DOI: 10.58587/18292437-2026.5-128
Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ Բագրատունյաց Հայաստան, Արաբական խալիֆայություն, վերնախավ, խնջույք

Общая характеристика придворных пиров в Багратидской Армении

Григорян Мариам Г.
к. и. н., Институт истории НАН РА (Ереван, РА)

Аннотация. Придворные пиры, проводившиеся в Багратидской Армении, в основном преследовали политические цели и играли важную роль в армяно-арабских отношениях.
Более того, как в Багратидской Армении, так и в Арабском халифате пиры являлись неотъемлемой частью официальных церемоний и встреч представителей багратидской и аббасидской элит, а также сопровождали их усилия, направленные на установление мира и заключение союзов.
Кроме того, придворные пиры отражали традиции и установившиеся обычаи, сложившиеся при дворе Багратидов и в придворной среде Халифата.
Придворные пиры также устраивались по случаю важных событий, связанных с внутренней жизнью страны.
В некоторых случаях пиры, организованные представителями багратидской знати, имели также оттенок принуждения, отражая обязательства по предоставлению натуральных продуктов.
Ключевые слова и словосочетания: Армянское царство Багратидов, Арабский халифат, элита, пир

A General Overview of Courtly Feasts in Bagratid Armenia

Grigoryan Mariam G.
PhD in history, Institute of History NAS of RA (Yerevan, RA)

Abstract. Courtly feasts held in Bagratid Armenia primarily served political purposes and played an important role in Armenian-Arab relations.
Moreover, both in Bagratid Armenia and in the Arab Caliphate, feasts formed an integral part of official ceremonies and gatherings of the Bagratid and Abbasid elites, as well as of their efforts to establish peace and conclude alliances.
In addition, courtly feasts reflected the traditions and established customs that had developed at the Bagratid court and within the courtly milieu of the Caliphate.
Courtly feasts were also held on the occasion of important events related to the internal affairs of the country.
In some cases, feasts organized by the Bagratid elite also had a coercive dimension, reflecting obligations to provide goods in kind.
From the perspective of studying Armenian-Arab relations, the court feasts organized by the Bagratid and Abbasid elites are of particular interest.
The court feasts held both in Bagratid Armenia and in the Arab Caliphate served political and diplomatic purposes. They constituted an important element of state protocol and reflected the traditions and customs established at the Bagratid royal court and within the courtly environment of the Arab Caliphate.
Keywords & phrases: Bagratid Armenia, Arab Caliphate, elita, feast

Նախաբան

Հայ մատենագիրների երկերում պահպանվել են ուշագրավ վկայություններ Բագրատունյաց Հայաստանում տեղի ունեցած խնջույքների մասին: Դրանք կազմակերպվում էին ժամանակի պահանջներին և Հայոց արքունիքում ձևավորված ավանդույթների ու ընդունված սովորույթների համաձայն:

Պալատական խնջույքները կարևոր նշանակություն են ունեցել ինչպես երկրի ներքին կյանքում, այնպես էլ հայ-արաբական, հայ-բյուզանդական և հայ-վրացական միջպետական հարաբերություններում[1]: Քանզի, Բագրատունյաց Հայաստանում տեղի ունեցած պաշտոնական արարողությունները հաճախ ուղեկցվում էին խնջույքներով:

[1] Կարծում ենք՝մեկ հոդվածի շրջանակում հնարավոր չէ անդրադառնալ Բագրատունյաց Հայաստանում տեղի ունեցած բոլոր խնջույքներին: Ուստի, հայ-բյուզանդական և հայ-վրացական միջպետական հարաբերությունների հետ աղերս ունեցող խնջույքները, կարող են դառնալ առանձին հետազոտության թեմա:

Դրանից բացի, երկրում խնջույքներ[2], հյուրասիրություններ և տոնակատարություններ կազմակերպվում էին նաև Բագրատունյաց Հայաստանի ներքին կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձությունների առթիվ:

Սույն հոդվածի շրջանակում կատարած մեր հետազոտության հիմնական նպատակն է՝

1. Ներկայացնել Բագրատունյաց Հայաստանում տեղի ունեցած պաշտոնական արարողություններին, Բագրատունի և Աբբասյան վերնախավերի հանդիպումներին և հայ-արաբական դաշինքների կնքմանը վերաբերող ուշագրավ մանրամասներ:

2. Հետազոտել Բագրատունյաց Հայաստանում տեղի ունեցած պալատական խնջույքների հրավիրման պատճառներն ու նպատակները:

3. Բացահայտել խնջույքների անցկացման արարողակարգային առանձնահատկությունները:

Հետազոտության հիմնական ժամանակագրական շրջանակն ընդգրկում է 9-11-րդ դարերը: Թեպետ որոշ դեպքերում, ուսումնասիրության շահերից ելնելով, հետազոտության ժամանակագրական շրջանակն ընդարձակվում է՝ հասնելով մինչև 13-րդ դ.:

Հոդվածը շարադրված է հայ և օտար աղբյուրների, ինչպես նաև հիմնահարցին վերաբերող գիտական գրականության ուսումնասիրության հիման վրա:

Հետազոտությունն իրականացվել է պատմահամեմատական և վերլուծական մեթոդների կիրառմամբ:

Բագրատունյաց Հայաստանում տեղի ունեցած պաշտոնական ընդունելությունների և հանդիպումների ընդհանուր նկարագիրը

Հայերենում «խնջույք» բառը ունի ժողով, բազմություն, ամբոխ, տոն ուրախություն և այլ իմաստներ [**8**, էջ 276]:

Հայ մատենագիրների երկերում այն արտահայտված է խրախճանք [**13**, էջ 137; **14**, էջ 180], տոն [**13**, էջ 197; **3**, էջ 270], ուրախություն [**10**, էջ150] նշանակությամբ: Բացի դրանից, հայկական աղբյուրներում տարբեր առիթներով հաճախ հիշատակված «ուրախություն անել» [**10**, էջ 150], «մեծարել» [**10**, էջեր 10, 94-95], «մեծ պատվով ընդունել» [**10**, էջ 50] կամ «պատվասիրել» [**13**, էջ 265] ձևակերպումները ևս կարող են արտահայտել խնջույքի կամ հյուրասիրության իմաստ:

Հետաքրքրական են նաև հարսանյաց հանդեսներին վերաբերող վկայությունները [**13**, էջ 181; **2**, էջ 231], քանզի դրանք ևս ուղեկցվում էին խնջույքներով:

Հարկ է նշել, որ Բագրատունյաց Հայաստանում տեղի ունեցած պաշտոնական արարողությունների, հանդիպումների, խաղաղության հաստատման, դաշինքների կնքման ժամանակ կարևոր նշանակություն են ունեցել խնջույքները: Այս տեսանկյունից հետաքրքրական են հատկապես Բագրատունյաց արքունիքում տեղի ունեցած պաշտոնական ընդունելությունները և հանդիպումները:

Հայոց պետականության վերականգնման շրջանում Բագրատունի վերնախավի կողմից պաշտոնական ընդունելության էին արժանանում հիմնականում Խալիֆայության կողմից Հայոց պետականությունը և Բագրատունի արքաների իշխանությունը ճանաչած Արմինիայի և Ատրպատականի ոստիկանները (կառավարիչները): Երբեմն այս կարևոր առաքելությունն իրականացնում էին անձամբ խալիֆները, որոշ դեպքերում՝ նրանց անունից արաբ ոստիկանները: Հայոց պետականության և Բագրատունի թագավորների իշխանության ճանաչումն իրականացվում էր Հայոց արքաներին թագավորական իշխանություն խորհրդանշող նշանակների հանձնմամբ:

Ընծաների հանձնմանը վերաբերող հիշատակություններում պահպանվել են նաև բազմաթիվ վկայություններ կողմերի՝ միմյանց մեծարելու, պատվի արժանացնելու մասին:

Թեպետ հայկական աղբյուրներում Հայոց պետականության և Բագրատունի արքաների իշխանության ճանաչման ժամանակ տեղի ունեցած խնջույքների վերաբերյալ ուղղակի վկայություններ չեն հիշատակվում, այդուհանդերձ կարելի է ենթադրել, որ նման կարևոր իրադարձությունները չէին կարող տեղի ունեցած լինել առանց խնջույքների և հյուրասիրության: Ուստի կարծում ենք՝ կողմերի՝ միմյանց մեծարելու և պատվի արժանացնելու մասին վերը նշված հիշատակությունները կարող են վերաբերել ինչպես նրանց փոխադարձ ընծաներ հանձնելուն, այնպես էլ տեղի ունեցած խնջույքներին:

Բագրատունի և Աբբասյան վերնախավերի մասնակցությամբ տեղի ունեցած խնջույքների համար կարևոր առիթ էին նաև պաշտոնական հանդիպումները:

Դրանց հիմնական նպատակը՝ երկու երկրների միջև առաջացած խնդիրների քննարկումն ու կարգավորումն էր: Սովորաբար այդ խնդիրները հանգուցալուծվում էին խաղաղության հաստատմամբ և դաշինքների կնքմամբ: Միջպետական հանդիպումները տեղի էին ունենում ժամանակի պահանջների և Բագրատունի ու Աբբասյան արքունիքներում ձևավորված ավանդույթների ու ընդունված սովորույթների համաձայն:

[2] Հին Հայաստանում տեղի ունեցած խնջույքների և ճաշերի մասին տե՛ս [**6**]: «Սասնա ծռեր» էպոսում և հայ միջնադարյան գրականության մեջ արտահայտված հացի, գինու, որսի խնջույքի ու սննդային կոդերի մասին տե՛ս [**5**]:

Կողմերի միջև առաջացած խնդիրները քննարկելու և դրանք հարթելու նպատակով հանդիպման առաջարկով հանդես էին գալիս ինչպես Բագրատունի [**2**, էջ 301], այնպես էլ Աբբասյան վերնախավերի ներկայացուցիչները [**2**, էջ 311]: Խաղաղության հաստատման, դաշինքների կնքման և առհասարակ պաշտոնական հանդիպումների ժամանակ կարևոր դերակատարություն ունեին նաև միջնորդները: Բագրատունյաց վերնախավի ներկայացուցիչներից այս առաքելությամբ հանդես էին գալիս Հայոց կաթողիկոսները [**13**, էջեր 167-168; **14**, էջեր 200-201], ազդեցիկ իշխանները [**13**, էջ 233; **2**, էջ 164], երբեմն նաև՝ դեսպանները [**13**, էջեր 193, 196; **2**, էջեր 164, 301], սուրհանդակ-կոչնակները [**13**, էջ 196; **2**, էջ 311]:

Արաբական խալիֆայության պարագայում այս առաքելությունը սովորաբար իրականացնում էին արաբ կառավարիչները [**13**, էջ 196] կամ միջնորդական առաքելությամբ Բագրատունյաց Հայաստան ժամանած դեսպանները [**13**, էջ 196; **2**, էջ 311]:

Այդուհանդերձ, հատկապես Հայոց վերնախավի պարագայում, միջնորդական առաքելություններն ոչ միշտ էին պսակվում հաջողությամբ: Հաճախ Խալիֆայության ներկայացուցիչներն արտահայտում էին իրենց կամքը և պահանջում էին Հայոց արքաներին անձամբ ներկայանալ: Այս առումով հետաքրքրական է Հայոց կաթողիկոս Գեորգ Բ Գառնեցու (876-897) պարագան:

Երբ Հայոց կաթողիկոսը փորձում է միջամտել և հարթել Սմբատ Ա Բագրատունու (890-914) և Ատրպատականի Սաջյան ամիրայության հիմնադիր Մուհամմադ Աֆշինի հարաբերությունները, վերջինս պահանջում է կաթողիկոսից, որ Սմբատ Ա Բագրատունին անձամբ իրեն ներկայանա: Գեորգ Բ Գառնեցու ստանձնած միջնորդական առաքելությունը չի ծառայում իր նպատակին, և նա ստիպված է լինում ձեռնունայն վերադառնալ՝ Հայոց արքային փոխանցելով Աֆշինի կամքը [**13**, էջեր 167-168]: Սակայն Սմբատ Ա Բագրատունին մերժում է Աֆշինի պահանջը, այն համարում է ծուղակ և հրաժարվում է մեկնել:

Բացի նրանից, որ միջնորդական առաքելություններն ոչ միշտ էին պսակվում հաջողությամբ, երբեմն դրանց իրացման ընթացքում վտանգվում էր նաև միջնորդների կյանքը:

Հայոց կաթողիկոս Գեորգ Բ Գառնեցին, երբ վերստին փորձում է հարթել Սմբատ Ա Բագրատունու և Աֆշինի միջև առաջացած լարվածությունը, այն ոչ միայն հաջող ելք չի ունենում, այլև վտանգվում է կաթողիկոսի ազատությունը, և նա ձերբակալվում է [**13**, էջ 168]:

Անհաջողության էին մատնվել նաև Հայոց Գրիգոր իշխանի գործադրած միջնորդական ջանքերը: Սմբատ Ա Բագրատունին նրա միջոցով փորձել է խալիֆից աջակցություն ստանալ՝ Աֆշինին փոխարինած Յուսուֆ Աբու Սաջի (901-919) ռազմատենչ հավակնությունները կանխելու նպատակով: Սակայն, Գրիգոր իշխանը Խալիֆայությունում տեղի ունեցող ներհակությունների պատճառով, ստիպված է լինում ձեռնունայն վերադառնալ Հայաստան [**13**, էջ 233]:

Այնուամենայնիվ, ոչ բոլոր դեպքերում էին միջնորդների գործադրած ջանքերը ապարդյուն անցնում:

Խաչիկ Ա Արշարունեցի կաթողիկոսի (973-991) միջնորդությամբ Հայոց արքա Սմբատ Բ-ի (977-990) և Գողթնի արաբ ամիր Աբու Դուլաֆի միջև խաղաղության դաշինք էր կնքվել [**14**, էջեր 200-201]:

Ամեն դեպքում, հարկ է նշել, որ միջնորդական առաքելությունների իրականացման արդյունքում ձեռք բերված հաջողությունները, նախ և առաջ, պայմանավորված էին քաղաքական շահերի թելադրանքով: Ինչ վերաբերում է դրանց ձախողմանը, ապա նման պարագայում կարող էին առաջանալ խիստ անցանկալի հետևանքներ:

Ավելին, հայ-արաբական հարաբերություններում Խալիֆայության կողմից արված առաջարկների կամ պահանջների մերժումը, հաճախ կարող էր հանգեցնել ռազմական գործողությունների և նորանոր հալածանքների պատճառ դառնալ: Նման անցանկալի հետևանքներ էին առաջացել այն բանից հետո, երբ Սմբատ Ա Բագրատունին մերժել էր Աֆշինին անձամբ ներկայանալու պահանջը: Վերջինս ոչ միայն դիմել էր ռազմական գործողությունների, այլև չէր ներել Հայոց արքայի այդ քայլը: Երբ մի առիթով, Սմբատ Ա Բագրատունին վերստին դեսպան է ուղարկում Աֆշինի մոտ՝ նրանից խաղաղություն խնդրելու, վերջինս Հայոց արքային չի ներում և թշնամանք է պահում՝ ժամանակին իրեն ներկայանալու պահանջն արհամարհելու պատճառով [**2**, էջ 301]:

Այդուհանդերձ, հաճախ հայ-արաբական պաշտոնական հանդիպումները պսակվում էին նաև հաջողությամբ: Այս պարագայում խնջույքները դառնում էին պաշտոնական հանդիպումների կարևոր բաղադրիչներ: Ասվածի ապացույցն է վերստին Սմբատ Ա Բագրատունու և Աֆշինի պարագան: Ի վերջո, Հայոց արքայի կատարած զիջումների արդյունքում կողմերի միջև հաշտություն է կնքվում: Ավելին, այն ամրապնդվում է Աֆշինի և Հայոց արքայի եղբոր՝ Շապուհի դստեր ամուսնությամբ: Տեղի ունեցած հարսանյաց արարողությունն ուղեկցվել է խնջույքով, խրախճանքներով և հարսի ու փեսայի ուրախ երգ ու պարով: Թեպետ հարսանյաց արարողության նկարագրության

վերաբերյալ այլ մանրամասներ չեն պահպանվել, այդուհանդերձ այն ունեցել է կարևոր քաղաքական նշանակություն և նպաստել է հայ-արաբական հարաբերությունների սերտացմանը [**13**, էջ 181]:

Բագրատունի և Աբբասյան վերնախավերի պաշտոնական հանդիպումները հաճախ տեղի էին ունենում նաև խալիֆայության վերնախավի ներկայացուցիչների նախաձեռնությամբ [**2**, էջ 311]: Այս պարագայում, թեպետ դրանց շարժառիթները տարբերվում էին Բագրատունի վերնախավի նախաձեռնած պաշտոնական հանդիպումների շարժառիթներից, այդուհանդերձ, դրանցում արտահայտվում էին նաև որոշ արարողակարգային ընդհանրություններ:

Բագրատունի վերնախավի նախաձեռնած պաշտոնական հանդիպումների հիմնական շարժառիթներն էին՝ Խալիֆայության վերահաս սպառնալիքների կանխումը, հարկային բեռի թեթևացումը և երկուստեք առաջացած զանազան խնդիրների կարգավորումը: Ինչ վերաբերում է Արաբական խալիֆայության նախաձեռնությամբ տեղի ունեցած պաշտոնական հանդիպումների շարժառիթներին, ապա դրանց գլխավոր նպատակը՝ երկրում կենտրոնախույս ուժերի առաջացումն էր, Հայոց պետականության հիմքերի թուլացումն ու ի վերջո, Բագրատունյաց Հայաստանի բռնակցման իրագործումն էր: Դրանով պետք է պայմանավորել այն հանգամանքը, որ Խալիֆայության բարձրաստիճան պաշտոնյաները՝ Արմինիայի և Ատրպատականի ոստիկանները, հաճախ հանդիպումներ էին ունենում ոչ միայն Բագրատունի արքաների, այլև Հայոց վերնախավի այլ ներկայացուցիչների հետ [**13**, էջ 332]:

Արաբական խալիֆայության պարագայում ևս պաշտոնական հանդիպումների առաջարկով սովորաբար հանդես էին գալիս արաբ ոստիկանները [**13**, էջեր 146-147, 332] կամ հատուկ միջնորդական առաքելությամբ երկիր ժամանած դեսպանները [**2**, էջ 311]:

Այդ հանդիպումների ժամանակ կարևորվում էին նաև անվտանգության երաշխիքներ տալու [**2**, էջ 239] և զանազան շքեղ ու թանկարժեք ընծաներ հանձնելու ընդունված ավանդույթը: Այս նախաձեռնությամբ հանդես էին գալիս ինչպես Բագրատունի [**13**, էջեր 193, 197-198, 306], այնպես էլ Աբբասյան վերնախավի ներկայացուցիչները [**13**, էջեր 133, 139, 146-147, 193, 197-198, 300; **2**, էջեր 314-315; **14**, էջեր 136; **11**, էջ 55]:

Այսպիսով, ի մի բերելով վերը նշյալը, կարելի է ենթադրել, որ պաշտոնական հանդիպումները կարևոր նշանակություն են ունեցել հայ-արաբական հարաբերություններում: Դրանց ընթացքում քննարկվել են միջպետական հարաբերություններին վերաբերող բազմաթիվ խնդիրներ: Երբեմն դրանք հարթվել են՝ կողմերի միջև խաղաղության հաստատմամբ և դաշինքների կնքմամբ: Այս իրադարձությունները, որոշ դեպքերում ուղեկցվել են խնջույքներով և հյուրասիրությամբ:

Խնջույքներում արտահայտված բնամթերային պարտավորությունները և քաղաքական սպառնալիքները

Երբեմն Բագրատունի և Աբբասյան վերնախավերի հարաբերություններում, հատկապես Բագրատունի վերնախավի պարագայում, խնջույքներն ու հյուրասիրությունները կրում էին նաև որոշակի հարկադրանքի երանգներ:

Որոշ դեպքերում Բագրատունի արքաները ստիպված էին բավարարել ոչ խաղաղասիրական նկատառումներով երկիր ժամանած արաբ կառավարիչների կամ նրանց հետ փոխկապակցված անձանց, այսպես կոչված, «բնամթերային պահանջները», քանի որ նրանք երբեմն Բագրատունի արքաներից պահանջում էին իրենց ապահովել սննդով և օրապարենով: Նման պահանջ Սմբատ Ա Բագրատունուն ներկայացրել էր Դվինում հաստատված Աֆշինի որդին՝ Դևդատը: Հայոց արքան ստիպված էր Դևդատին հատկացնել օրապարեն՝ մեկ տարուց ոչ պակաս ժամկետով [**13**, էջ 187]:

Սննդի կամ հյուրասիրության միջոցով թշնամուն, այսպես կոչված, գոհացնելու ավանդույթն առավել լայն տարածում է ստանում Սելջուկյան սուլթանության և մոնղոլական տիրապետության շրջանում:

Գագիկ Բ Կարսեցին (1049-1065), քաջ գիտակցելով, որ հզոր ախոյան սուլթան Ալփ-Արսլանի (1063-1072) հետ անհարկի է պայքարել, նրան հնազանդություն է հայտնում:

Արդյունքում, կողմերի միջև հաստատված «բարեկամությունը» ուղեկցվում է ոչ միայն Գագիկին Բ Կարսեցուն արքայական հանդերձներ հագցնելով, այլև նրա հետ «ուրախություն», այսինքն՝ խնջույք անելով [**10**, էջ 150]:

Հայոց վերնախավի բնամթերային պարտավորություններն առավել մեծ չափերի հասան հատկապես մոնղոլական տիրապետության շրջանում: Մոնղոլների աչքի էին ընկնում սննդի հանդեպ ունեցած անհագ մոլուցքով [**3**, էջ 270]:

Բագրատունյաց Հայաստանում տեղի ունեցած խնջույքները հաճախ ծառայում էին նաև իբրև պատրվակ սպանություններ, ձերբակալություններ և զանազան այլ խարդավանքներ կազմակերպելու համար: Վասպուրականի իշխան Գագիկ Ապումրվանը, նման մտադրություն ունենալով, իր փեսա Աշոտ Արծրունուն և նրա եղբայրներին կանչում է Կոտոր բերդ՝ պատիվ տալու պատրվակով: Սակայն հյուրասիրությունը զուտ միջոց էր չար դիտավորությունն իրագործելու համար: Արդյունքում, Գագիկ Ապումրվանը հենց հյուրասիրության ժամանակ

Արծրունի եղբայրներին զրկում է ազատությունից և նրանց ձերբակալում [**2**, էջ 297]:

Բագրատունյաց Հայաստանում և Արաբական խալիֆայությունում տեղի ունեցած պալատական խնջույքներին վերաբերող որոշ մանրամասներ

Հայ մատենագիրների երկերում ուշագրավ վկայություններ են պահպանվել երկրում տեղի ունեցած պալատական խնջույքների, հյուրասիրությունների, տոնակատարությունների և բարեգործական նպատակով կազմակերպված ճաշկերույթների մասին:

Դրանցից առավել հետաքրքրական են հատկապես հանդիսավոր արարողությունների՝ Բագրատունի արքաների թագադրության, մայրաքաղաքների կառուցման (հռչակման), եկեղեցիների օծման (նավակատիքների) և այլ առիթներով կազմակերպված տոնակատարությունները, խնջույքներն ու հյուրասիրությունները:

Նման իրադարձություններից էր Աշոտ Գ Բագրատունու (953-977) թագադրության և Անին մայրաքաղաք հռչակելու առթիվ կազմակերպված տոնակատարությունը, որին մասնակցելու նպատակով Բագրատունյաց Հայաստան էին ժամանել հարևան երկրների աշխարհիկ և հոգևորի իշխանության բարձրաստիճան ներկայացուցիչներ [**14**, էջ 187; **10**, էջեր 3-4]:

Ուշադրության են արժանի նաև Բագրատունյաց Հայաստանում եկեղեցիների օծման առթիվ կազմակերպված խնջույքները: Դրանք ևս վերածվում էին տոնակատարությունների:

Ստեփանոս Օրբելյանը մանրամասն նկարագրում է Տաթևի վանական համալիրի եկեղեցիներից 906 թ. կառուցված Սուրբ Առաքելոց եկեղեցու օծման արարողությունը [**15**, էջեր 227-228]: Բացի դրանից, պատմիչը հաղորդում է նաև դրա՝ ութ օր տևելու մասին [**15**, էջ 228]: Այս հանգամանքը թույլ է տալիս ենթադրել, որ Սուրբ Առաքելոց եկեղեցու նավակատիքը ժամանակին վերածվել էր մեծ տոնակատարության:

Գանձասարի վանքի նավակատիքի մասին Կիրակոս Գանձակեցու վկայությունները թեև թվագրվում են 13-րդ դարով՝ 1240 թ., այդուհանդերձ, ուշագրավ մանրամասներ են հաղորդում: Մասնավորապես նավակատիքի մասնակիցների մասին հիշատակելիս պատմիչը փաստում է, որ նրանց թիվը հասնում էր 700-ի [**3**, էջ 270]: Կիրակոս Գանձակեցու այս հաղորդման մեջ որքան էլ չափազանցության երանգներ լինեն, անառարկելի է այն փաստը, որ եկեղեցու օծումը, որն ի դեպ միացվել էր Վարդավառի մեծ տոնին, եղել էր բազմամարդ: Այս կարևոր իրադարձության առթիվ Խաչենի իշխան Հասան-Ջալալ Դոլան կազմակերպել էր նաև մեծ ճաշկերույթ [**3**, էջ 270]:

Անդրադառնալով ճաշկերույթներին՝ հարկ է նշել, որ Բագրատունյաց արքունիքում ընդունված են եղել նաև բարեգործական նպատակով կազմակերպված ճաշկերույթները: Այս առաքելությամբ Հայոց արքաներից հատկապես հայտնի էր Աշոտ Գ Բագրատունին: Նա, կրելով «Ողորմած» մականունը, գթասիրությամբ գերազանցել էր իր բոլոր նախորդներին: Աշոտ Գ-ն ուրուկներին, անդամալույծներին, կաղերին և կույրերին հավաքում էր իր մոտ և նրանց դարձնում խրախճանքների մասնակից: Հայոց արքան հատուկ հոգածություն էր ցուցաբերում հիվանդների նկատմամբ և նրանց հյուրասիրում թագավորական ըմպելիքներով լցված իր բաժակով [**14**, էջեր 180-181]:

Բարեգործական ճաշկերույթների նախաձեռնությամբ հանդես էին գալիս նաև Հայոց վերնախավի կանայք: Մարիամ Արծրունի իշխանուհու կարգադրությամբ Գլականի սրբավայրում վանականանների համար կազմակերպվել էր բարեգործական ճաշկերույթ [**6**, էջ 123]: Թեև այդ վկայությունը ժամանակագրորեն թվագրվում է առավել վաղ շրջանով, այդուհանդերձ արտահայտում է Հայոց վերնախավում ընդունված սովորույթները:

Բագրատունի արքունիքում տեղի ունեցած պալատական խնջույքները և հյուրասիրություններն այսքանով չեն սահմանափակվում: Սակայն ասվածն էլ բավարար է ենթադրելու, որ խնջույքները եղել են պետական արարողակարգի կարևոր բաղադրիչներից և արտահայտել են Բագրատունյաց արքունիքում ձևավորված ավանդույթներն ու ընդունված սովորույթները:

Ինչպես Բագրատունյաց Հայաստանում, այնպես էլ Արաբական խալիֆայությունում տեղի ունեցած պալատական խնջույքները ևս կարևոր նշանակություն են ունեցել:

Հարկ է նշել, որ Բագրատունյաց Հայաստանում և Արաբական խալիֆայությունում տեղի ունեցած պալատական խնջույքների կազմակերպման շարժառիթների միջև զգալի տարբերություններ չեն դրսևորվել: Արաբական խալիֆայությունում ևս խնջույքները եղել են պետական արարողակարգի կարևոր բաղադրիչներ: Բացի դրանից, ինչպես Բագրատունյաց Հայաստանում, այնպես էլ Արաբական խալիֆայությունում խնջույքներ կազմակերպվել են տերությունում տեղի ունեցած նշանակալի իրադարձությունների առթիվ:

Արաբական խալիֆայության պաշտոնական արարողակարգի համաձայն՝ պաշտոնների և տիտղոսների շնորհումն իրականացվում էր պաշտոնական արարողությունների ժամանակ [**17**, էջեր 69-70]:

Թեմայի հետազոտության տեսանկյունից հատկապես հետաքրքրական են Խալիֆայությունում տեղի ունեցած այն արարողությու-

ները և դրանց մաս կազմող խնջույքները, որոնք աղերսվում են Հայոց վերնախավի հետ:

Թովմա Արծրունու վկայությունների համաձայն՝ գերության մեջ գտնվող Վասպուրականի իշխանները՝ Աշոտ Արծրունին և նրա որդի Գրիգոր-Դերնիկը, ներում էին ստացել, և նրանց էր վերադարձվել Վասպուրականը Խալիֆայությունում տեղի ունեցած ճոխ ճաշկերույթի ժամանակ [**2**, էջ 225]:

Ի մի բերելով վերը նշյալը՝ կարելի է ենթադրել, որ ինչպես Բագրատունյաց Հայաստանում, այնպես էլ Արաբական խալիֆայությունում տեղի ունեցած պալատական խնջույքները կարևոր նշանակություն են ունեցել պաշտոնական արարողությունների, հանդիպումների, խաղաղության հաստատման, դաշինքների կնքման ժամանակ: Ավելին, դրանք արտահայտել են Բագրատունյաց արքունիքում և Խալիֆայության պալատական միջավայրում ձևավորված ավանդույթներն ու ընդունված սովորույթները:

Բագրատունյաց Հայաստանում տեղի ունեցած պալատական խնջույքները

Բագրատունյաց Հայաստանում տեղի ունեցած խնջույքները, լինելով պետական արարողակարգի կարևոր բաղադրիչներ, այդուհանդերձ արտահայտում են Բագրատունյաց արքունիքում ձևավորված ավանդույթներն ու ընդունված սովորույթները, ինչպես նաև վերնախավի շքեղ և հարմարավետ կենցաղավարությունը:

Կարելի է ենթադրել, որ Բագրատունյաց արքունիքում պալատական խնջույքները տեղի էին ունենում արքայական և իշխանական պալատներում: Դրանք աչքի են ընկել իրենց շքեղությամբ, արտաքին ու ներքին ճոխ հարդարանքով:

Ուշագրավ վկայություններ են պահպանվել Անիի և Վասպուրականի թագավորական պալատների վերաբերյալ:

Հնագիտական պեղումների ժամանակ հայտաբերված գտածոները թույլ են տվել Նիկողայոս Մառին հայկական աղբյուրներում Բագրատունիների արքայական պալատին վերաբերող շքեղ նկարագրություններն իրական համարել: Խոսքը վերաբերում է ոսկեզօծ սրահներին, որմնակարներով զարդարված գեղաքանդակ դահլիճներին և այլ արքայավայել կառույցներին, որոնք արտահայտում էին արքայական իշանության փառքը և ժամանակի շքեղության շունչը [**16**, էջ 69]:

Պատմիչը, մանրամասն ներկայացնելով Աղթամարում Գագիկ Արծրունու (908-943) կատարած շինարարական ձեռնարկները, ուշագրավ վկայություններ է հաղորդում նաև արքայական պալատի մասին: Այն քառանկյուն էր, որի լայնության ու երկարութան չափը քառասուն կանգուն էր, նույնքան էր նաև բարձրությունը: Որմերն անապակ կրի ու քարի զանգվածներ էին, որ իրար էին խառնված ինչպես կապարի ու կրի համաձուլվածքը: Պալատի շինվածքը, հիմքից մինչև օդի մեջ կախված նրա գագաթը, մնում էր հաստատուն առանց սյուների, ինչն արդեն մտքից վեր է ու զարմանքի է արժանի: Պալատն ուներ նաև կամարակապ խորաններ, անկյուններ և գեղեցիկ բոլորոպատեր: Այն ուներ նաև երկնքի պես բարձր, ոսկեզարդ ու լուսաճաճանչ գմբեթներ:

Պալատի մեծությունն ահավոր է ու ապշեցնող: Նրա մեջ դրված էին մանր հորինվածքով, հրաշալի գեղեցկությամբ կտրատված դռներ, որոնք բացվելիս երկփեղկվում էին [**2**, էջեր 323-324]:

Բագրատունի վերնախավը խիստ կարևորում էր հանգիստը՝ խնջույքներն ու զանազան զվարճանքները: Ուստի երկրում կառուցվել են նաև հատուկ խնջույքների, հյուրասիրությունների համար նախատեսված վայրեր:

11-րդ դարի սկբին Բաղքի արքա Գրիգորը (պատմիչը նկատի ունի Սյունյաց Գրիգոր I արքային – **Մ. Գ.**) իր կնոջ՝ Շահանդուխտ թագուհու և նրա քրոջ՝ Կատայի և Սենեքերիմի հետ (խոսքը վերաբերում է Սյունյաց Սենեքերիմ I թագավորին – **Մ. Գ.**) ոչ միայն նորոգել է Վահանավանքը, այլև այնտեղ նրանք կառուցել են մի շարք շինություններ [**15**, էջեր 238-241]: Ուշագրավ են հատկապես «…. հովանի և խրախարան իշխանացն» [**15**, էջ 241] շինությունների կառուցման վերաբերյալ հիշատակությունները:

Հայերենում «հովանի» բառը ունի նաև տաղավար նշանակություն [**9**, էջ 132], ինչ վերաբերում է «խրախարան»-ին, ապա այն հայտնի է ուրախության, զվարճության, զբոսանքի վայր նշանակությամբ [**8**, էջ 307]: Միջնադարյան Հայաստանում վանական համալիրները, կրոնական կենտրոններ լինելուց զատ, եղել են նաև վերնախավի հավաքատեղիներ: Ուստի կարելի է ենթադրել, որ կառուցված վերոհիշյալ շինությունները՝«…. հովանի և խրախարան իշխանացն», նախատեսված են եղել արքունի վերնախվի հանգստի, պաշտոնական ընդունելությունների և, վերջապես, հանդիսավոր ճաշկերույթների համար:

Հայոց վերնախավի ներկայացուցիչներն աչքի են ընկել ազնվականներին բնորոշ հարմարավետ կենցաղավարությամբ: Թերևս այս հանգամանքով էին նաև պայմանավորված ձերբակալության մեջ գտնվող Հայոց կաթողիկոսի դժգոհությունները՝ բազմաթիվ զրկանքների, այդ թվում նաև անկողին պատրաստող, ձեռքերին ջուր լցնող, սրբիչ կամ սկուտեղ մատուցող, ինչպես նաև ջուր տվող սպասավորներ չունենալու առնչությամբ [**13**, էջեր 169-170]: Ուստի, կարելի է ենթադրել, որ թագավորական խնջույքների ժամանակ ևս պալատական

սպասավորներն իրականացրել են սեղանի հարդարման, սննդի պատրաստման և զանազան այլ աշխատանքներ: Սակայն Հովհաննես Դրասխանակերտցին մի առիթով արաբների հասցրած արհավիրքները նկարագրելիս շեշտում է նաև Հայոց վերնախավի տիկնանց՝ սեղան դնելու սովորույթի մոռացության մասին [**13**, էջ 262]: Այս հանգամանքը թույլ է տալիս ենթադրել, որ Բագրատունյաց արքունիքում ազնվական կանայք կարող էին որոշակի մասնակցություն ունեցած լինել խնջույքների նախապատրաստական աշխատանքներին:

Ինչ վերաբերում է Հայոց թագավորներին կամ իշխաններին, ապա հենց նրանք էին հաճախ հյուրերին հրավիրում և ընունում, նրանց հյուրասիրում և որոշ դեպքերում էլ՝ ընծաներով ճանապարհում: Սմբատ Ա Բագրատունին անձամբ էր Վրաց Ատրներսեհ թագավորին հրավիրել իր մոտ՝ մեծ պահքը հանդիսավորությամբ տոնելու: Այս առիթով կազմակերպված տոնակատարության ավարտից հետո Հայոց արքան նրան ճանապարհել էր թանկարժեք ու շքեղ ընծաներով [**13**, էջ 197]:

Գանձասարի օծման առթիվ կազմակերպված խնջույքի ժամանակ Հասան- Ջալալ Դոլան անձամբ էր հյուրասիրել և ընծաներով ճանապարհել հյուրերին [**3**, էջ 270]:

Ինչ վերաբերում է խնջույքների ժամանակ մատուցվող ուտեստներին, ապա ինչպես բոլոր ժամանականերում, այնպես էլ Բագրատունյաց Հայաստանում սնունդը նախ և առաջ եղել է կենսական անհրաժեշտություն, իսկ սննդի նկատմամբ ցուցաբերած զսպվածությունը՝ դրվատանքի արժանի երևույթ [**13**, էջ 137]:

Պատմիչը Հայոց թագավորներից Աշոտ Ա Բագրատունու (881/883-890) մի շարք առավելություններից շեշտում է նաև նրա՝ սննդի նկատմամբ դրսևորած չափավորությունը [**13**, էջ 137]: Թեև հայկական աղբյուրներում արքունի վերնախավի՝ սննդի օգտագործման հարցում ցուցաբերած զսպվածությունը համարվում է դրվատանքի արժանի երևույթ[3], այդուհանդերձ, Բագրատունյաց արքունիքում տեղի ունեցած խնջույքներն ու հյուրասիրություններն աչքի էին ընկնում իրենց շքեղությամբ և մթերքների առատությամբ: Ավելին, խնջույքների կամ հյուրասիրության ժամանակ իբրև մեծարանք հաճախ շեշտվում է մթերքների առատությունը: Հայոց կաթողիկոս Հովհաննես Ե Դրասխանակերտցին (898-929) նման պատվելի ընդունելության է արժանանում Ատրներսեհին այցելելիս: Վերջինս կաթողիկոսին հյուրասիրում է՝ առատ ուտելիքներ պատիվ տալով [**13**, էջ 265]:

Հարկ է նշել, որ հայ մատենագիրների երկերում պահպանված վկայությունները և հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված գտածոները հնարավորություն են ընձեռում որոշ պատկերացում կազմել Հայոց վերնախավի սննդային նախասիրությունների և նրանց կազմակերպած խնջույքների ժամանակ մատուցված ուտեստների մասին:

Ամենայն հավանականությամբ, Հայոց վերնախավի շրջանում առավել տարածված է եղել մսամթերքի օգտագործումը: Մի առիթով Հովհաննես Դրասխանակերտցին, արաբների կողոպտիչ արշավանքները և երկրում ծայր առած սովը նկարագրելիս, հիշատակում է, որ բնակչության հարուստ խավի ներկայացուցիչների մի մասը ևս ստիպված է եղել անցնել «խոտակեր կյանքի»: Նրանք սնվել են թունավոր բույսերով և վնասակար կանաչեղենով [**13**, էջ 261]:

Դրանից զատ, Դվինի միջնաբերդի պեղումների ժամանակ հայտնաբերվել են բազմաթիվ կենդանական մնացորդներ՝ կովի, ոչխարի, այծի ոսկորներ, որոնք գտնվել են թոնրի մեջ դրված ամաններում, այսինքն՝ եղել են կերակրի մնացորդներ [**7**, էջեր 241-242]:

Ուշագրավ են նաև այնտեղից հայտնաբերված որսի կենդանիների և թռչունների՝ լորի ու կաքավի մնացորդները, ինչպես նաև հավի և սագի ձվի կեղևները [**7**, էջեր 241-242]:

Թեև հայտնաբերված գտածոները որոշ չափով արտահայտում են Դվինի վերնախի սննդային նախասիրությունները, այդուհանդերձ, մատենագրական վկայությունները փաստում են՝ Բագրատունյաց Հայաստանում անասնապահության զարգացման բարձր մակարդակի մասին:

Սրանով պետք է պայմանավորել Աշոտ Ա Բագրատունու՝ բոլոր տափարակ վայրերում ագարակներ և գոմեր հիմնելու ձեռնարկները [**13**, էջ 139]: Նրա կառավարման շրջանում զանձարանները լիքն են եղել հարստությամբ՝ ձիերի երամակներով, կովերի նախիրներով և ոչխարների հոտերերով [**13**, էջ 142]: Բագրատունի մյուս արքաների կառավարման շրջանում ևս երկրում նկատվել է անասնապահության զարգացման բարձր մակարդակ:

Ինչ վերաբերում է Հայոց վերնախավի կազմակերպած խնջույքների ժամանակ մատուցված ուտեստներին, ապա դրանց վերաբերող մանրամասն վկայությունները թվագրվում են առավել ուշ շրջանով: Խոսքը վերաբերում է Կարսի թագավոր Գագիկի Բ Կարսեցու կողմից սելջուկյան սուլթան Ալփ-Արսլանի պատվին կազ-

[3] Սննդի օգտագործման հարցում ցուցաբերած զսպվածությունն առավել արտահայտվում էր հոգևորականների շրջանում: Նրանք աչքի էին ընկնում իրենց զուսպ սննդակարգով: Թանը, պանիրը, յուղը համարում էին ճոխ սնունդ և հրաժարվել էին դրանք ճաշակել կիրակի օրերին: Հոգևորականները հիմնականում օգտագործում էին բուսական սնունդ և բավարարվում էին բանջարեղենով և ընդեղենով: Միայն գլխավոր տոն օրերին էին ձեթ ճաշակում, այն էլ՝ բաժակներով: Այս մասին առավել մանրամասն տե՛ս [**13**, էջ 137]:

մակերպված ճաշկերույթի ժամանակ մատուցված ուտեստին [**10**, էջ 150]: Այս ճաշկերույթը հետաքրքրական է մի քանի առումով: Բացի նրանից, որ դրանում հիշատակված է մատուցված ուտեստի՝ խորոված գառան մսի մասին, նաև հնարավոր է դառնում պատկերացում կազմել խնջույքի ժամանակ ծախսված դրամական միջոցների մասին: Պատմիչի վկայությունների համաձայն՝ մեկ խորոված գառան արժեքը կազմել էր 1000 դահեկան [**10**, էջ 150]: Այս վկայությունը որքան էլ չափազանցություն լինի, ակնհայտ է, որ մատուցված ուտեստն ունեցել է բավականին բարձր արժեք: Հատկապես այն պարագայում, երբ Կարսի թագավորը ստիպված էր եղել ոչ միայն Արփ Արսլանին, այլև նրա զորքին հյուրասիրել: Պատմիչի գնահատմամբ ճաշկերույթի արժեքը կազմել էր 100000 դահեկան [**10**, էջ 150]:

Ինչ վերաբերում է մատուցված ուտեստի՝ խորոված գառան մսի ընտրությանը, կարծում ենք՝ այն մի շարք հանգամանքներով կարող էր պայմանավորված լինել: Կարելի է ենթադրել, որ նշված ժամանակաշրջանում գառան խորոված միսը եղել է վերնախավի շրջանում առավել նախընտրելի և տարածված ուտեստ: Չենք բացառում նաև, որ ուտեստի ընտրության պատճառը կարող էր պայմանավորված լինել Ալփ-Արսլանի և նրա զորքի կրոնական պահանջներից բխող սննդային սահմանափակումներով:

Կարելի է ենթադրել, որ կենդանական սննդից զատ, խնջույքների և հյուրասիրությունների ժամանակ մատուցվել են նաև այլ մթերքներ՝բանջարեղեն, մրգեր և անուշեղեն: Հայկական և օտար աղբյուրներում տարբեր առիթներով պահպանված հիշատակությունները մեզ հուշում են, որ երկրում մրգերից առավել տարածված են եղել խաղողը, թուզը և նուռը [**13**, էջ 260; **15**, էջ 253]:

Արաբ պատմիչը մեծ հիացմունքով է հիշատակում նաև զուկալ (ռուկալ) [**12**, էջ 656] կոչված պտղի մասին: «Զուկալ» (ռուկալ, zūqāl) բառը փոխառվել է պարսկերենից և նշանակում է հոն: Ի դեպ, «զողալ», «զղալ», «զողալենի» բառերը հայերենում ևս գործածվում են «հոնի ծառ» և «հոն» նշանակությամբ [**8**, էջ 395; **1**, էջ 104]:

Ինչ վերաբերում է հայկական թզին ու շագանակին, ապա դրանք արաբական աղբյուրում հիշատակված են իբրև շատ ընտիր [**12**, էջ 657]:

Բագրատունյաց արքունիքում տեղի ունեցած խնջույքներին առանձնակի շքեղություն էին հաղորդում Հայոց վերնախավի կենցաղում օգտագործվող սպասքը: Այն, կիրառական նշանակությունից զատ, արտահայտում էր նաև արքայական շքեղություն, ճոխություն և ազնվական խստապահանջություն:

Այդ են վկայում Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք Անիի թագավորական պալատից հայտնաբերված խեցեղենի ամենաբարձրորակ տեսակներից՝ հախճապակյա և ճենապակյա բազմաթիվ թասերը, բաժակները, ջրամանները և այլ կենցաղային նշանակության առարկաները: Դրանք աչքի են ընկնում իրենց նրբագեղությամբ, շքեղությամբ և պատրաստման մեծ վարպետությամբ: Հնագիտական պեղումների արդյունքում Անիում առավել ուշ շրջանում հայտնաբերվել է նաև շողյուն ոսկեգույն հախճապակի:

Կարծում ենք՝ տեղին է մեջբերել այն պնդումը, որ Անիի վերնախավի ներկայացուցիչները, ի տարբերություն Դվինի ազնվական վերնախավի, սպասքի նկատմամբ եղել են առավել խստապահանջ և օգտագործել են առավել շքեղ ու թանկարժեք կենցաղային առարկաներ [**4**, էջ 135]: Նրանց օգտագործած սպասքը պատրաստում էին տեղի վարպետները, իսկ հախճապակյա կենցաղային առարկաների որոշ մասը ներմուծվում էր նաև Չինաստանից: Սմբատ Ա Բագրատունու՝ Յուսուֆին հանձնած շքեղ ու թանկարժեք ընծաների մեջ հիշատակված. «*….ըմբակս և նուագս և կամար ի համակ ոսկւոյ՝ գործ Հռոմայական ճարտարաց, յերանգս գունակ գունակ ապակւոյ….*» [**13**, էջ 198] ամբողջացնում են Բագրատունի վերնախավի կենցաղում օգտագործած սպասքի շքեղության մասին բոլոր պատկերացումները:

Այսպիսով, ի մի բերելով վերը նշյալը, կարելի է ենթադրել, որ Բագրատունյաց Հայաստանում տեղի ունեցած պալատական խնջույքները հիմնականում հետապնդել են քաղաքական նպատակներ և կարևոր նշանակություն են ունեցել հայ-արաբական հարաբերություններում:

Ավելին, ինչպես Բագրատունյաց Հայաստանում, այնպես էլ Արաբական խալիֆայությունում, խնջույքներն ամբողջացրել են պաշտոնական արարողությունները, Բագրատունի և Աբբասյան վերնախավերի հանդիպումները, ինչպես նաև խաղաղության հաստատմանն ու դաշինքների կնքմանն ուղղված նրանց ձեռնարկները:

Բագրատունյաց Հայաստանում և Արաբական խալիֆայությունում տեղի ունեցած պալատական խնջույքների կազմակերպման պատճառների և նպատակների միջև էական տարբերություններ չեն դրսևորվել:

Բացի դրանից, խնջույքներն արտահայտել են նաև Բագրատունյաց արքունիքում և Խալիֆայության պալատական միջավայրում ձևավորված ավանդույթներն ու ընդունված սովորույթները:

Պալատական խնջույքների կազմակերպման առիթ են հանդիսացել նաև երկրի ներքին կյանքին վերաբերող կարևոր իրադարձությունները:

Որոշ դեպքերում Բագրատունի վերնախավի կազմակերպած խնջույքները կրել են նաև հարկադրանքի երանգ՝ արտահայտելով բնամթերային պարտավորություններ:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Աճառյան Հ.,** Հայերեն արմատական բառարան, հ. II: – Եր., Համալսարանի հրատ., 1973: – 687 էջ:
2. **Թովմա Արծրունի և Անանուն զրուցագիր**, Պատմութիւն տանն Արծրունեաց, Քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Մ. Դարբինյան-Մելիքյանի. – Եր., Մագաղաթ հրատ., 2006: – 504 էջ:
3. **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի: – Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1961: – 426 էջ:
4. **Հակոբյան Թ.**, Անիի պատմութուն (հնագույն ժամանակներից մինչև 1945 թ.): – Եր., Երևանի համալսարանի հրատ., 1960: – 415 էջ:
5. **Համբարձումյան Հ.**, Հացն ու գինին, որսն ու սննդային կոդերը «Սասնա ծռեր» էպոսում և հայ միջնադարյան գրականության մեջ: – Եր., Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի հրատ., 2024: – 223 էջ:
6. **Հացունի Վ.**, Ճաշեր եւ խնճոյք հին Հայաստանի մէջ: – Վենետիկ - Ս. Ղազար, 1912: – 506 էջ:
7. **Ղաֆադարյան Կ.**, Դվին քաղաքը և նրա պեղումները: – Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1952: – 298 էջ:
8. **Մալխասեանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան, հ II: – Եր., Պետհրատի տպարան, 1944, 512 էջ:
9. **Մալխասեանց Ստ.**, Հայերեն բացատրական բառարան, հ III: – Եր., Պետհրատի տպարան, 1944: – 614 էջ:
10. **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, հրամանաւ Տ. Տ. Մկրտիչ Ա: – Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 1898: – 448 էջ:
11. **Մխիթարայ Այրիվանեցւոյ** պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկուա, Ի տպարանի ի Լազարեան ճեմարանի Արեւելեաց լեզուաց, 1860: – 70 էջ:
12. **Մուկադդասի**, Արաբական աղբյուրներ Գ, Արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, ներածությունը և բնագրից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, կազմող և խմբագիր Վ. Տեր-Ղևոնդյան: – Եր., Երևանի համալսարանի տպարան, 2005: – 703 էջ:
13. **Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ**, Պատմութիւն Հայոց: – Թիֆլիս, Էլէքտրատպարան Ն. Աղանեանցի, 1912: – 427 էջ:
14. **Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան**, Պատմութիւն տիեզերական: – Ս. Պետերբուրգ, Ի տպարանի Ի. Ն. Սկորոխոդովի, 1885: – 438 էջ:
15. **Ստեփաննոս Օրբէլեան**, Պատմութիւն նահանգին Սիսական: – Էլէքտրատպարան Ն. Աղանեանցի, 1911, Թիֆլիս: – 618 էջ:
16. **Марр Н. Я**, Ани, книжная история города и раскопки на месте городища. – Москва-Ленинград, 1934. – 133 с. +LVII рис.
17. **Хилал Ас-Сабы**, Установления и обычаи двора халифов, перевод с арабского, предисловие и примечания И. Б. Михайловой, Памятники письменности Воствка, LXVII. – Москва, Издательство Наука, 1983. – 140 с.

Сдана / Հանձնվել է՝ 25.09.2026
Рецензирована / Գրախոսվել է՝ 02.10.2026
Принята / Ընդունվել է՝ 09.10.2026